ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» փետրվարի 2015 թվական N 14–Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ 252 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՄՍՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ S 500 ՄԱԿՆԻՇԻ, 35 DV 555 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 706.123 (ՅՈԹ ՀԱՐՅՈՒՐ ՎԵՑ ՀԱԶԱՐ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԵՔ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին է դիմել Հարություն Սամսոնի Խաչատրյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող MERCEDES –BENZ S 500 մակնիշի, 35 DV 555 պետհամարանիշի մեքենայի գույքահարկի 706.123 (յոթ հարյուր վեց հազար հարյուր քսաներեք) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հարություն Սամսոնի Խաչատրյանի դիմումը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի հունվարի 29-ին N 812 թվագրմամբ), Շիրակի մարզի քննչական բաժնի Գյումրի քաղաքի Մուշի քննչական բաժանմունքի պետ Օվսյանի կողմից տրված 2014 թվականի մարտի 14-ի տեղեկանքը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել արտոնություն Հարություն Սամսոնի Խաչատրյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող MERCEDES–BENZ S 500 մակնիշի, 35 DV 555 պետհամարանիշի մեքենայի գույքահարկի 706.123 (յոթ հարյուր վեց հազար հարյուր քսաներեք) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարման նկատմամբ՝ ազատելով 706.123 (յոթ հարյուր վեց հազար հարյուր քսաներեք) Հայաստանի հանրապետության դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (15)		**Դեմ (0)**	**Ձեռնպահ(1)**
Ա. Ադամյան	_____		Ե. Պողոսյան _____
Գ. Ադամյան	_____		
Ա. Բաղեյան	_____		
Ա. Բաղրամյան	_____		
Ա.Գրիգորյան	_____		

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«06» փետրվարի 2015 թ.